

**ՓՈԽԱՌԵԱԼ ԲԱՌԵՐ ԵՒ ՕՏԱՐԱԲԱՌ
ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՅՆԱՆԻԾՆԵՐԻ՝
ԺԸ. ԴԱՐԻՑ ԱՒԱՆԴՈՒԱԾ ԶԵՌԱԳԻՐ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Հայերէնի բարբառների բառապաշարային տարբերութիւնները, ինչպէս հաւաստում են հետազոտողները, պայմանաւորւում են նաեւ օտար լեզուական ազդեցութիւններով: Մասնաւորապէս, նշւում է, որ փոխառեալ բառերը, ունենալով տարածման իրենց շառաւիղը, նկատելիօրէն գերակշռում են տարածքային առումով սահմանային գօտիներում, որտեղ այլալեզու հարեւանների հետ չփման հնարաւորութիւններն աւելի շատ են¹: Այս հնարաւորութիւններին, թերեւս, յաւելուեն նաեւ գաղթերն ու բռնագաղթերը, որոնցով նոյնպէս կարելի է պայմանաւորել հայերէնի բարբառների բառապաշարային տարբերութիւնները:

Հետազոտողների հաւաստմամբ Հայաստանի տարբեր վայրերից ժ. եւ յետագայ դարերին ոչ միայն ձեռագրեր են տարուել կրթութեան տարբեր օջախներ, գրչութեան արուեստի կենտրոնների՝ ընդօրինակելու-վերակազմելու, եւ այնուհետեւ յետ բերուել², այլեւ ձեռագրեր են ընդօրինակուել թելադրելով³: Եւ թէեւ «....մի չգրուած օրէնք է եղել նախատիպ ձեռագրին հարազատ մնալը»⁴, այդու-

1 ԱՃԱՌԵԱՆ, Հ., "Հայոց լեզուի պատմութիւն, մաս 2, Երեւան 1951, 424: ՄՈՒՐԱԴԵԱՆ, Յ., Բառային գուգարանութիւնների արժէքը. Քարտէզագրման մի փորձ, ի Հայերէնի բարբառագիտական ատլաս, հտ. Բ., Երեւան 1985, 69-70:

2 МИКАЕЛЯН, Г., *История Киликийского армянского государства*, Ереван 1952, 286.

3 ՄՈՎՍԻՍԵԱՆ, Ա., *Ռաուագծեր հայ դպրոցի եւ մանկավարժութեան պատմութեան*, Երեւան 1958, 402:

4 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Լ., *Բառային տարբերակներ V դարի գրաբարում*, ի Հայոց լեզուի պատմութեան հարցեր, պրակ 3, Երեւան 1991, 8-9:

հանդերձ, գրչագրերը ընդօրինակողները միջամտել են ձեռագրին, արտագրել են՝ ըստ լեզուին տիրապետելու մակարդակի, հետեւաբար չի կարելի բացառել ընդօրինակողի ապրած միջավայրի լեզուի ազդեցութիւնը: Այս ենթադրութիւնն ամրագրուում է նաեւ նոյնանիշների՝ ԺԸ. դարի աւանդուած ձեռագիր բառարանների⁵ մի քանի նոյնանիշային շարքեր եզրափակող փոխառեալ բառերով (դրանք, թերեւս, արտացոլում են ԺԸ. դարու լեզուական վիճակը), որոնք հնչիւնական տարբերակներով գործառուում են հայերէնի բարբառներում եւ խօսակցական լեզուում: Եւ քանի որ նոյնանիշային շարքերն աւարտում են փոխառեալ այդ բառերով, կարելի է ենթադրել, որ դրանք ձեռագիր բառարանները կազմողների կամ գրչագրերն ընդօրինակողների միջամտութիւններ են. նրանք փաստօրէն յաւելել եւ լրացրել են իրենց իմացածը: Եւ ուրեմն հարկ է ենթադրութիւնը հաստատել որոշակի օրինակներով:

Ձեռ. 873ում Ժամ. Ժամանակ. ամանակ. պահ. վայր. վայրկեամ. րոպէ նոյնանիշային շարքերն (195ա)⁶ եզրափակում է «Ժամանակ, պահ» նշող գահ (օճ gāh) բառը: Միջին գրական հայերէնում այն դիտւում է պարսկերէնից փոխառութիւն՝ կեահ (ու պէկեահ) տարբերակով եւ «Ժամ» («ու ամԺամ») նշանակութեամբ⁷: Ստ. Մալխասեանցը գահը վկայում է իբրեւ բարբառային բառ՝ նաեւ «Ժամանակ առ Ժամանակ, երբեմն-երբեմն» մակբայական կիրառու-

5 Ըստ Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ ԺԸ. դարու աւանդուած մի շարք ձեռագրերում ամփոփուած են նոյնանիշների առաւել ամբողջական բառարանները՝ հետեւեալ խորագրերով՝ «Նշանակումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառիս» (Ձեռ. 566, 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթէոսի վ. Բաղդիոք հոմանիշ բառից» (Ձեռ. 3110, 75ա-112ա), «Բառք նոյնանշանք՝ Ժողովեալք ըստ այբուբենից, ի Մխիթարեան Մատթէոսի գերերցանիկ վարդապետէ» (Ձեռ. 873, 185ա-220բ եւ Ձեռ. 775, 53ա-80ա): Նշուածներին հարկ է յաւելել նաեւ Ձեռ. 6762ում գետեղուած անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համեմատութիւնից պարզուում է, որ վերջինս եւ Ձեռ. 566ինը որոշ տարբերութիւններով համընթաց են: Յօդուածում պահպանուած է ձեռագիր բառարանների ուղղագրութիւնը:

6 Փակագծերում նշուում է ձեռագրահամարի էջը. յետագայ շարադրամբում՝ ձեռագրի համարը եւ էջը:

7 Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան (այսուհետեւ՝ ԱՄԳՀՊ), հտ. Ա., Երեւան 1972, 234:

թեամբ⁸: Ըստ «Հայոց լեզուի բարբառային բառարան»-ի եւ Ս. Ամատունու՝ «Ժամանակ, պահ» նշող գահը գործառուում է բարբառային ընդարձակ տարածքում⁹: Հ. Աճառեանը վկայում է երկու գահ արմատ. մէկը՝ «բարձր նստարան, բեմ, 2. պատուի աթոռ (թագաւորի կամ իշխանի), 3. պատիւ, իշխանական աստիճան» նշանակութիւններով, եւ միւսը՝ «(յետնաբար) «դար, բարձր տեղ, ժայռերի գլուխը» իմաստով¹⁰: Առաջինի համար առաջարկուում է «պրս. օձ gāh գահ, աթոռը, երկրորդ գահ արմատի համար՝ ընդգծւում՝ «Թուի թէ նոյն է նախորդ բառի հետ»¹¹: Բայց եւ միաժամանակ «նորագիւտ» անգահ՝ «անժամանակ, ուշ» բառը բխեցւում է «պրս. օձ gāh «Ժամանակ» բառից՝ ան բացասականով»¹²: Ըստ Հ. Աճառեանի՝ նոյն իմաստով եւ նոյն բացատրութեամբ անգահը գործառուում է խիանում¹³: Ի յաւելումն հարկ է յիշատակել Հ. Աճառեանի՝ «ընդարձակ զարգացում կրած» վայր բառի առնչութեամբ «տեղի գաղափարից ժամանակի գաղափարին անցնելու» մասին դիտարկումը, որ արձանագրւում է վայր-ի՝ «մի փոքր ժամանակ» երրորդ նշանակութեամբ¹⁴: Այս դէպքում Հ. Աճառեանն առաջարկում է համեմատել առաջի եւ յառջ, յետ եւ յետոյ բառերը, այլեւ պարսկերէն օձ gāhը, «որ նշանակում է «տեղ. 2. գահ. 3. ժամանակ, պահ», եւ «յատկապէս գոթ. Թեիhs «Ժամանակ», հիիւս. Թing եւ հրգ. ding «դատական ժողով, ատեան, իր տեղն ու ժամանակը»...»՝ իբրեւ ամփոփում հաւաստելով, որ նախապէս այդ բառերը մի որոշ գործողութեան ժամանակ են նշանակել, սակայն «յետոյ ընդհանրացմամբ՝ առհասարակ «Ժամանակ»¹⁵: «Քըմնութիւն վանի բարբառի» աշխատութեան մէջ արդէն նա գտնում է,

8 ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Ս., Հայերէն բացատրական բառարան (այսուհետեւ՝ ՄՀԲԲ), հտ. Ա. Երեւան 1944, 406:

9 Հայոց լեզուի բարբառային բառարան (այսուհետեւ՝ ՀԼԲԲ), հտ. Ա., Երեւան 2001, 229: ԱՄՍՏՈՒՆԻ, Ս., Հայոց բառ ու բան (այսուհետեւ՝ ԱՀԲՈՒԲ), Վաղարշապատ 1912, 124: Տե՛ս նաեւ ԲԱՌՆԱՍԵԱՆ, Զ., Ժամանակամիջ բառերը հայերէնի բարբառներում, Երեւան 2009, 124-125:

10 ԱՀԱՌԵԱՆ, Հ., Հայերէն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱԲ), հտ. Ա., Երեւան 1971, 502:

11 Անդ:

12 Անդ, 182:

13 ԱՀԱՌԵԱՆ, Հ., Հայերէն գաւառական բառարան (այսուհետեւ՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 95:

14 ՀԱԲ, հտ. Բ., 300:

15 ՀԱԲ, հտ. Ա., 286:

որ պրս. օճ gāh «Ժամանակ»ը ծագում է սանս. gāthā «երգ, շարական, օրհներգ» բառից, որից էլ ն.պրս. gāhի նախ «աղօթքի ժամանակը», ապա այս մասնաւոր գաղափարից անցումը «Ժամանակ» ընդհանուր գաղափարին¹⁶: Ժամանակային առումով Հ. Աճառեանի այս դիտարկումը վերջինն է, եւ դարձեալ չեչտում է մասնաւոր գաղափարից անցումը «Ժամանակ» ընդհանուր գաղափարին: Բայց եւ հարկ է վկայել, որ արդէ պարսկերէնի բառարաններում օճ gāh¹⁷ նշանակում է «1. время, пора; 2. см. 𐭪𐭭𐭮𐭲¹⁸; 3.2-й компонент слож. сл. в знач.: 1) времени.... и 2) места....»¹⁹: Ասել է՝ արդէ պարսկերէնում օճ gāhը «տեղ» իմաստ է արտայայտում միայն իբրեւ բաղադրեալ բառերի վերջին բաղադրիչ: Եւ քանի որ հայերէնի՝ յիշատակուած բարբառային բառաբանները գահ հնչիւնական տարբերակ չեն վկայում, ուրեմն կարելի է ենթադրել, որ նոյնանիշային շարքերին յաւելուած պարսկերէն օճ gāh-ին հնչիւնական արտայայտութեամբ եւ «Ժամանակ, պահ» նշանակութեամբ ուղղակի համընկնող գահ-ը անմիջական նոր փոխառութիւն է:

Պարսկերէնից փոխառեալ 𐭪𐭭𐭮𐭲 [lafäp] «тощий, худой»²⁰ հիմքից լղարանալ²¹ կազմութեամբ²² է աւարտում Հիւծել. Ժիւրել. մաշել. հաշել. նուաղիլ. նուազել. հալիլ. յոսկերսն հեմուլ. վատիլ. վտտիլ նոյնանիշային շարքերն (Ձեռ. Ձեռ. 566(1), 256ա. 775, 66ա. 873, 202ա. 3110, 97բ. 6762, 115ա)²³: «Նիհարել» իմաստով լղարելն ըստ

16 Ա.ՃԱՌԵԱՆ, Հ., *Քննութիւն Վանի քարտէի*, Երեւան 1952, 191-192:

17 Պարսկերէն-ռուսերէն բառարանը վկայում է «խսկց.» նշումով «трон, престол» նշանակութեամբ համանուն օճ gāh-ը. *Персидско-русский словарь*, т. 2, Москва 1983, 383.

18 Այսինքն՝ «երբեմն, ժամանակ առ ժամանակ». ասել է՝ ՄՀԲԲում արձանագրուածը (ՄՀԲԲ, հտ. Ա., 406):

19 *Персидско-русский словарь*, т. 2, 383-384.

20 *Персидско-русский словарь*, т. 2, 416. ՄՀԲԲ արձանագրում է միայն լղարղը. ՄՀԲ, հտ. Ա., 299:

21 Ձեռագիր բառարաններում առկայ հնչիւնական տարբերակներն են՝ լիղրամալ, լղամալ, լղրամալ:

22 Օտար հիմքով (արմատով) քայերի մասին տե՛ս ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Լ., *Հայերէնում իրանական փոխառութիւնները*, Երեւան 1990, 120:

23 Ձեռագիր բառարաններում առկայ է նաեւ *Նիհար. հիւծեալ. կամ լիւծեալ. մաշեալ. տկարացեալ. նուազեալ. կամ նուաղեալ. անգորացեալ. լղարեցեալ. վտտիլ. ոսին. ազագում* նոյնանիշային շարքերն (Ձեռ. 566, 262ա-262բ. 775, 59ա. 873, 193ա. 3110, 86բ. 6762, 119ա):

բառարանների առկայ է Արարատեան, Ղազարի, Ղարաբաղի, Թբիլիսիի, Հաւարիկի, Մեղրու բարբառներում (ՀԼԲԲ, հտ. Բ., 233. ԱՀԲՈՒԲ, 252. ՀԳԲ, 427): ՄՀԲԲն այն յղում է Գիհարելին (ՄՀԲԲ, հտ. Բ., 203): Արդի հայերէնի բացատրական բառարանները լղարելը վկայում են «Ժող.» նշումով²⁴: ԺԸ. դարի աւանդուած գրչագրում առկայ լղարանալը կարելի է դիտել «Միջին հայերէնի քառարան»ում Մխ. Հերացու «Ջերմանց միսիթարութիւն» երկից քաղուած միակ օրինակով արձանագրուած նիհարանալ «Գիհարել, մաշուել» բայի համաբանական կազմութիւն²⁵:

Թաշկինակ. դաստարակ. դաստիշոր(ն). վարշամակ. սրբիչ. ձեռացիմջ*. ջնջան** (ՁՁ. 566(1), 246ա. 873, 194ա. 3110, 88բ. 6762, 108բ) նոյնանիշային շարքերին (Ձ. 775, 60ա) յաւելուած է մանտիլ բառը: Հ. Աճառեանը մանդիլ «գլխի թաշկինակ»ը նշում է՝ այն բառերի շարքում, որ «փոխ են առնուած ո՛չ թէ ուղղակի լատիներէնից, այլ յունարէնի միջոցով, ըստ որում ներկայացնում են միշտ այն ձեւերը, որ կրել են լատիներէն բառերը յունարէնի մէջ»²⁶: Փոխառեալ այս բառը²⁷ գործառուած է հայերէնի բարբառներում (Պոլիս, Վան) «թաշկինակ» (ՀԼԲԲ, հտ. Դ., 25)²⁸ եւ «կանացի գլխի թաշկինակ,

24 Ա.ՂԱՅԵԱՆ, Է., Արդի հայերէնի բացատրական քառարան (այսուհետեւ՝ ԱՀԲԲ), Երեւան 1976, 533: Ժամանակակից հայոց լեզուի բացատրական քառարան (այսուհետեւ՝ ԺՀԼԲԲ), հտ. Բ., Երեւան 1972, 418:

25 ՂԱԶԱՐԵԱՆ, Ռ. - Ա.ԻՅՏԻՍԵԱՆ, Հ., Միջին հայերէնի քառարան (այսուհետեւ՝ ՄՀԲԲ), Երեւան 2009, 573:

* ՁՁ. 873ում եւ 3110ում ձեռնացիմջ տարբերակն է:

** ՁՁ. 566(1)ում եւ 6762ում ջնջան տարբերակն է:

26 Ա.ՃԱՌԵԱՆ, Հ., Հայոց լեզուի պատմութիւն, Բ. մաս, Երեւան 1951, 40, 42:

27 ՄՀԲԲ նշում է՝ «արաբ., պրսկ. mândil» (2009, 491), ՄՀԲԲՆ՝ «յուն. mantéla, թաշկինակ» (հտ. Գ., 251):

Լատիներէնում mantēle քաղադրուած է man(manus) «ձեռք» եւ tēla «կտոր», յունարէնում մոյմպէս՝ χειρόμακτρον՝ χειρο «ձեռք» եւ μακτρον «լաթ, կտոր» բառերով, որոնք, նախապէս նշանակելով «սրբիչ», յետագայում, սակայն, գործածուել են «թաշկինակ» իմաստով. տե՛ս ՍԻՄՈՆԵԱՆ, Ն., Ստուգարանական դիտարկումներ, Ի Բանբեր Երեւանի համալսարանի. Բանասիրութիւն, 130.2, 2010, 49-50:

28 Ա.ՃԱՌԵԱՆ, Հ., Թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Ի էմինեան ազգագրական ժողովածու, հտ. Գ., Մոսկուա-Վաղարշապատ 1902, 228: Այս աշխատութեան մէջ Հ. Աճառեանը նշում է բառի՝ արաբերէնից փոխառուած լինելը՝ «արաբ. مندیل mendil»:

վարչամակ» (*Թբիլիսի, Կարճեւան, Համչէն, Նոր Նախիջեւան. ՀԼԲԲ, հտ. Դ., 22*) նշանակութիւններով: ՄՀԲԲն եւ ՄՀԲն նոյնպէս նշում են «գլխաշոր, վարչամակ»ը (ՄՀԲԲ, *անդ, ՄՀԲ, անդ.*), իսկ «Բառգիրք հայոց»ի բացատրութիւնն է՝ «Թաշկիմակ, որով գփիրտն սրբեն, որ է վարչամակ, կամ մանտիլ, կամ ռուփակ, կամ դաստառակ, կամ ֆոդ»²⁹: Հարկ է, թերեւս, արձանագրել, որ Պոլսից բացի միւս բարբառներում, ըստ բառարանների, մանդիլ հնչիւնական տարբերակն է:

Միայն 22. 775ում (57ա), 873ում (190բ) է առկայ Գօսամալ. ընդարմանալ՝ որ է ույուշմիշ ըլլալ նոյնանիշային շարքերն: Նոյնանիշային շարքերն եզրափակող ույուշմիշ ըլլալ կազմութեան յարադիրը «Առձեռն քառարան հայկազնեան լեզուի» վկայութեամբ տաճկերէն ույուշմագն է³⁰: Հ. Աճառեանը «հայերեմի վրայ թուրքերեմի ազդեցութիւն»ը քննելիս նշում է, որ իրեն ծանօթ չեն Նոր-Նախիջեւանի, Վանի եւ Ղարաբաղի փոխառութիւնների աղբիւր հանդիսացած «ժողովրդական թրքական բարբառները», ուստի ինքն արձանագրում է «միայն պոլսահայ բարբառին թրքական փոխառութեանց ձայնական փոփոխութիւնները»³¹, յիշատակելով նաեւ ույուշտուրմիշ ընել «թւրեցմել»ը, որ «=թրք. اويوشدورمق uyusdurmak»ն է³², եւ փաստում, որ «Ծամր քայերու անցեալ ընդունելութեան مش մըշ վերջաւորութիւնը.... առանց բացառութեան կը վերածուի միշ. օր.آزمق azmak «կատողի»=ազմիշ ըլլալ «կատողի»....»³³: Սա գորչագրերում հանդիպող միակ թուրքերէն բայաճենն է, որ, ինչպէս տուեալ ժամանակաշրջանի համար նշում է Հ. Աճառեանը, «նոր է սկսած ներմուծուիլ լեզուին մէջ»³⁴:

Օղի յենաբառով նոյնանիշային շարքեր են վկայում միայն երկու ձեռագիր բառարաններում. 2եռ. 775ում՝ Օղի. գիմի. պօզայ. օշարակ. շիրէ. շերպէթ (79բ), եւ 2եռ. 566(Ի)ում՝ Օղի. ցփի. արախ (278բ): Ակնյայտօրէն առաջինն առաւել ընդգրկունն է, որքանով

29 Բառգիրք հայոց (այսուհետեւ՝ ԲՀ), աշխտ. ԱՄԱԼԵԱՆ Հ., Երեւան 1975, 116:

30 Առձեռն քառարան հայկազնեան լեզուի (այսուհետեւ՝ ԱԲ), Վեներտիկ 1865, 306:

31 ԱՃԱՌԵԱՆ, Հ., Բշ. աշխ., 18:

32 ԱՃԱՌԵԱՆ, Հ., Բշ. աշխ., 263:

33 ԱՃԱՌԵԱՆ, Հ., Բշ. աշխ., 23:

34 ԱՃԱՌԵԱՆ, Հ., Բշ. աշխ., 16:

նոյնանիշային շարքերն լրացնում են պօզայ, շիրէ, շերպէթ փոխառեալ բառերը:

Ըստ Հ. Աճառեանի՝ *Թուրքերէնից փոխառեալ boza բառը*³⁵ հանդիպում է Պոլսի, Նոր Նախիջեւանի բարբառներում՝ պօզա «կորեկաջուր, կորեկով շինուած ըմպելի մը. bozan»³⁶, ըստ ՀԼԲԲԻ՝ *Եւդոկիայի*³⁷ (Ամս.) եւ Հաւարիկի բարբառներում՝ համապատասխանաբար՝ պօզա՝ «կորեկից պատրաստած ըմպելիք» (ՀԼԲԲ, հտ. Ե., 97), եւ բոզա՝ «1. Կարասի մէջ եղած՝ եփը տեղը խաղողի հիւթ: 2. Կորեկից պատրաստած խմիչք» (ՀԼԲԲ, հտ. Ա., 204), հնչիւնական տարբերակներով³⁸: *Ինչպէս արդէն յիշատակուել է, Հ. Աճառեանն արձանագրում է* «միայն պոլսահայ բարբառին թրքական փոխառութեանց ձայնական փոփոխութիւնները»՝ *նշելով, որ* «....մեր փոխառութիւնները բոլորն ալ կը պատկանին ժողովրդական փոխառութեան տեսակին եւ ըստ այսմ առաջ եկած են բուն ժողովրդական թուրքերէնէն»³⁹, *իսկ* «*Ժողովրդական Եւ ձայնին դէմ գրականը ունի միշտ Բ ձեւը, որ կը հնչուի նոյնպէս Ե. այս հնչումը անփոփոխ կը մնայ նաեւ մեր փոխառութեանց մէջ. Օրինակ՝* *بزbezaz = bezaz = պէզազ «կտաւալանառ»....»*⁴⁰: *Հետեւաբար, կարելի է ենթադրել, որ պօզա-ն նոյնանիշային շարքեր է ներառել Պոլսի բարբառին տեղեակ անձնաւորութիւն:*

Պարսկերէնից փոխառեալ շիրէն, ըստ ՀԼԲԲԻ, թէեւ «Մզած խաղողի հիւթ, քաղցու» նշանակութեամբ եւ հնչիւնական տարբերակներով գործառւում է հայերէնի բարբառներում, սակայն նշուած հնչիւնական տարբերակը հանդիպում է Սեբաստիայում, Եւդոկիա-

35 Boza “буза, напиток из проса”: Турецко-русский словарь, Москва 1977, 129.

36 ԱՃԱՌԵԱՆ, Հ., ԳԶ. աշխ., 299:

37 Թէեւ հարկ է արձանագրել, որ «Եւդոկիոյ Հայոց բարբառէն քաղուած գաւառական բառերու» բառացուցակում այն չի նշուում. հմտ. ԳԱՋԱՆՃԵԱՆ, Յ., *Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը*, Վիեննա 1899, 21-23:

38 ԲՀ-ն բառը յիշատակում է՝ *օղի-ն* բացատրելիս՝ «-բօզայ, կամ ցֆիմ, կամ արաղ»։ ԲՀ, 338:

39 ԱՃԱՌԵԱՆ, Հ., ԳԶ. աշխ., 17:

40 ԱՃԱՌԵԱՆ, Հ., ԳԶ. աշխ., 29: Հ. Աճառեանը նշում է, որ «Տառադարձութեան մէջ Նոր-Նախիջեւանի ձեւերը Պատկանեանի տառադարձութեամբ (են) եւ միշտ ու միշտ համապատասխան պոլսականին....»։ ԱՃԱՌԵԱՆ, Հ., ԳԶ. աշխ., 16: Թէեւ հարկ է նշել, որ Նոր Նախիջեւանի բարբառում բառասկզբի ձայնեղ պայթականների խլութիւն չի արձանագրուած. ՋԱՀՈՒԿԵԱՆ, Գ., ԳԶ. աշխ., 45, 52:

յում, Ամասիայում, Մալաթիայում (ՀԼԲԲ, հտ. Դ., 243): Բայց եւ «դեռ չխմորուած քաղցր նոր գինի» իմաստով միայն Վանի եւ Ղարաբաղի բարբառներում (ՀԼԲԲ, անդ.): Ծիրայ բառը ՄՀԲՆ նոյնպէս յիշատակում է իբրեւ «քաղցր հիւք, քաղցու» (ՄՀԲ, Կ. 2, էջ 595): Հ. Աճառեանը նշում է «խաղողի ջուր» շիրաի՝ *թուրքերէնից, վերջինս էլ՝ պարսկերէնից փոխառեալ լինելը* («=թրք. شيره šēra= պրս. šire شيره)⁴¹: «Քաղցր հիւք, քաղցու» նշանակութեամբ շիրա(յ)ն իբրեւ բարբառային բառ են վկայում ՄՀԲԲՆ (հտ. Գ., 518), ԱՀԲԲՆ (1109), ԺՀԼԲԲՆ (հտ. Դ., 74): Հարկ է նշել, որ արդի պարսկերէնի բառարանում شيره [šire] նշանակում է նաեւ «вино, молодое вино», հագուադէպ էլ (редко) «виноградное вино»⁴²: Ուրեմն եւ նկատի առնելով շիրեի՝ պարսկերէնից փոխառեալ լինելը, նաեւ հայերէնի բարբառներում եւ նոյնանիշային շարքերում առկայ հնչիւնական տարբերակները, այլեւ իմաստային տարբերութիւնները՝ կարելի է բառը անմիջական նոր փոխառութիւն դիտել, եւ եթէ ընդունելի է շիրեի «գինի» նշանակութիւնը, կարելի է նաեւ ենթադրել, որ իրապէս ընդօրինակողը տիրապետել է պարսկերէնին կամ էլ եղել է Վանի կամ Ղարաբաղի բարբառախօս վայրերից: Նկատելի է նաեւ՝ շիրե եւ պօզա բառերն արձանագրուել են Եւդոկիայի բարբառում, սակայն մի դէպքում տարբերութիւնն իմաստային է, միւս դէպքում՝ հնչիւնական:

Ինչ վերաբերում է «օշարակ» նշանակութեամբ շերպէք հընչիւնական տարբերակին, ապա այն, ըստ ՀԼԲԲի, առկայ է Կարինի (Շիրակ), Սուրմալուի բարբառախօս վայրերում (ՀԼԲԲ, հտ. Դ., 211): Ենթերէք բարբառային բառ է վկայում ՄՀԲԲՆ (ՄՀԲԲ, հտ. Գ., 514): Միջին գրական հայերէնում շարքաքը միայն «շաքարաջուր»ն է (ԱՄԳՀՊ, 270)՝ ՄՀԲի վկայութեամբ նաեւ շարպաք հնչիւնական տարբերակով (ՄՀԲ, 2009, 591): Թէեւ հետազոտողները նշում են, որ «փոխատու լեզուների համապատասխան ձևերը չեն օգնում» հայերէնի բարբառներում գործառող «տուեալ հասկացութիւնն արտայայտող բոլոր գուգածները մի այնպիսի մախաճելի յանգեցնելուն, որից օրինաչափօրէն ծագած լինէին դրանք»⁴³, բայց եւ, այդուհանդերձ, հարկ է արձանագրել, որ արդի բառարանները նշում են «шербер;

41 Ա.ՃԱՌԵԱՆ, Հ., 62. աշխ., 262:

42 *Персидско-русский словарь*, т. 2, 125.

43 ԽԱԶԱՏՐԵԱՆ, Ա., *Հնչիւնաբանութեան ուսումնասիրութեան սկզբումները հայ քարառագիտական աշխատութիւններում*, ի հայերէնի քարառագիտական ատլաս, հտ. Բ, Երևան 1985, 101:

сладкий напиток; сироп”ի՝ արաբերէն شربات [šerbat]⁴⁴ եւ թուրքերէն şerbet հնչումը⁴⁵, որոնցով էլ, թերեւս, կարելի է ամրագրել ըստ Մ. Մալխասեանցի՝ շերպէի «տաճկերէնից» փոխառումը լինելը:

Յատկանշական է, որ շիրէ, շերպէ բառերը յաջորդում են օշարակին, որն ըստ բառարանների փոխառուել է պահլավերէնից (ՀԱԲ, հտ. Դ., 615. ՄՀԲԲ, հտ. Դ., 608)⁴⁶ եւ «այլեւայլ հիւքերից պատրաստուած ախորժահամ ըմպելիք, մրգահիւք» նշանակութեամբ լայնօրէն գործածուած է հայերէնում (ԱՀԲԲ, 1591. ԺՀԼԲԲ, հտ. Դ., 786): Նկատի առնելով այս՝ կարելի է նաեւ հաւանական համարել, որ շիրէն նոյնանիշային շարքեր է ընդգրկուել «մրգահիւք» իմաստի հաշուառմամբ: Ուրեմն եւ կարող է լինել բառին առնչուող երկու մօտեցում՝ կա՛մ ընդօրինակողը տիրապետել է օտար լեզուի, կա՛մ էլ պարզապէս յաւելել է իր իմացածը:

Անդրադառնալով Օղի. ցֆի. արախ նոյնանիշային շարքերին՝ հարկ է արձանագրել, որ գրաբարի եւ արդի հայերէնի բառարաններում վկայուած օղի («ցֆի, բարկ եւ ոգելից ըմպելի».... (արդի գրականում՝ «արաղ» իմաստով). ՀԱԲ, հտ. Դ., 613) եւ ցֆի («արմաւից պատրաստուած մի տեսակ արքեցուցիչ ըմպելիք, օղի». ՀԱԲ, հտ. Դ., 465) բառերով կազմուած նոյնանիշային շարքերում առանձնանում է, ըստ ՄՀԲԲ, պարսկերէնից փոխառեալ արաղը՝ արախ տարբերակով, որն առկայ է Մ. Ղրիմեցու երկերում (ՄՀԲ, էջ 84): Արաղը գործառուած է բարբառային ընդարձակ տարածքում, կարելի է ասել՝ բարբառային ընդհանրական կիրառութիւն ունի (ՀԼԲԲ, հտ. Ա., 119): Արդի հայերէնի բացատրական բառարաններում արաղը «խսկց.» նշումով է (ԱՀԲԲ, 125. ԺՀԼԲԲ, հտ. Ա., 205):

Օձի⁴⁷ յենաբառով (ՁՁ. 566, 278բ. 775, 79բ. 873, 220բ. 3110, 112ա. 6762, 130ա) նոյնանիշային շարքերում վկայուած գրապանը գրաբարի տպագիր բառարաններում «եզր զգեստուց, որպէս զօճեօք

///

44 БАРАНОВ, Х., *Арабско-русский словарь*, Москва, 1984, ст. 397.

45 *Турецко-русский словарь*, 808.

46 Արդի պարսկերէնի բառարանն այն բացատրում է իբրեւ «հիւք»՝ افشوره [āfshore] “2) сок”. Персидско-русский словарь, т. 1, Москва 1983, 107.

47 Գրաբարի անեզական որոշ բառերի՝ եզակի բռնով գործածութիւնը լատինաբան հայերէնի ձեւաբանական համակարգում մկատուող երեւոյթ է. տե՛ս ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Լ., *XVII դարի գրաբարը, Լեզուի եւ ոճի հարցեր*, VII, Երեւան 1983, էջ 184: ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ, Վ., *Հատկանշան հայերէնի պատմութիւն (14-18-րդ դդ.)*, Երեւան 2010, 269:

եւ զլանջօք եւ զգղանցիւք» նշանակութեամբ է արձանագրուած (ՆՀԲ, հտ. Ա., 584. ԱԲ, 227)⁴⁸: Հ. Աճառեանը «իրանեան փոխառութիւն»՝ «հագուստի վիզը. հագուստի եզրերը՝ վզի, լանջի եւ քղանցքների վրայ» իմաստով գրապանի համար «յետմաքար» նշում է գրապան «գրպան, ջեր»ը. գրպան «ջեր»ը, նրա հաւաստմամբ, միակն է արդի գրականում (ՀԱԲ, հտ. Ա., 602): ՄՀԲԲ, պահպանելով գրապանը, համեմատութեան եզր է առաջարկում գրպանը (ՄՀԲԲ, հտ. Ա., 474): ՄՀԲԲ վկայում է գրպանակը իբրեւ «փոքր գրպան» (ՄՀԲ, 154):

Նոյնանիչների՝ ԺԸ. դարերի աւանդուածներից Զ. 775ը առանձնանում է փոխառեալ բառերի առատութեամբ: Այսպէս՝ միայն Զ. 775ն ունի Ռատ. առատ. ճոխ. շատ կամ քաջ. բարի նոյնանիչալի շարքերն (79բ): Յենաբառը պահպանելից «մոգերին տրուած մի տիտղոս» իմաստով փոխառեալ *rātēn* է (ՀԱԲ, հտ. Դ., 142): Գրաբարի տպագիր բառարանները վկայում են «իմաստուն. ներհուն. հմուտ. նոյն. պատուաւոր. մեծ», «Տէր (իբրեւ մակդիր մոգպետաց մոգպետի)» նշանակութիւնները (ՆՀԲ, հտ. Բ., 681. ԱԲ, 709. ԳԲ, հտ. Բ., 434): ՄՀԲԲ «(կրօն)» նշումով մասնակիօրէն է պահպանում դրանք (ՄՀԲԲ, հտ. Դ., 158): ՄՀԲԲ «Մանր ժամանակագրութիւններ»ից արձանագրում է «առատածեղն. մեծաեղի, վեհանձն, ազնիւ» նշանակութիւններով ըռատ տարբերակը (ՄՀԲ, 224): Հնչիւնական նոյն տարբերակը, սակայն «աւագ» նշանակութեամբ, վկայում է միջին գրական հայերէնում (ԱՄԳՀՊ, հտ. Ա., 279): Հայր Մ. Զախախեանի բացատրութիւնն է՝ «առատ. պատուաւոր. նոյնապէս»⁴⁹: Յատկանշական է, որ «առատ, շատ» իմաստներով ռատը հանդիպում է միայն վանի բարբառում (ՀԼԲԲ, հտ. Ե., 230): Եւ քանի որ ակնյայտ է ձեռագիր բառարաններում արձանագրուած եւ վանի բարբառում գործառող ռատ բառի՝ հնչիւնական արտայայտութեամբ եւ նշանակութեամբ ուղղակի համընկնումը, կարելի է ենթադրել, որ այս դէպքում էլ գրչագիրն ընդօրինակողը վանի բարբառի կրող է եղել:

Եւ դարձեալ միայն Զ. 775ում (79բ) է վկայում պահպանելից փոխառեալ, հայերէնում «առանձին անգործածական» «լոյս, լուսաւոր, պայծառ» իմաստով *rōšn* արմատից ռոշնութիւն կազմութիւնը (ՀԱԲ, հտ. Դ., 146): Նոյնանիչային շարքերն են կազմում անկեղծութիւն. անխարդախութիւն. ամրիծութիւն. ուղղամտութիւն. Անխառ-

48 ՂԱԶԱՐԵԱՆ, Ռ., Գրաբարի բառարան (այսուհետեւ՝ ԳԲ), Երեւան, 2000, հ. 1, էջ 342:

49 ԶԱԽԱԽԵԱՆ, Մ., Բառգիրքի բարբառ հայ եւ իտալական, Վեներտիկ, 1837, էջ 1225:

նութիւն. մաքրութիւն. սրբութիւն. յստակութիւն բառերը: Գրաբարի տպագիր բառարանները նշում են ոռոշնութիւնի «լուսաւորութիւն. պայծառութիւն. յստակութիւն սրտի պարգութիւն. պարգամտութիւն» իմաստները (ՆՀԲ, հտ. Բ., 682. ԱԲ, 709. ԳԲ, հտ. Բ., 435): Նոյնն է արձանագրում ՄՀԲԲ (ՄՀԲԲ, հտ. Դ., 163): Գրաբարում ոռոշնութիւն յենաբառով ՀՇն են կազմում լուսաւորութիւն. պայծառութիւն, (փխբ.) պարգութիւն. պարգամտութիւն հոմանիշները (ԳՀԲ, 599): ՀՀՀԲում ՀՇն առաւել ընդգրկուն է՝ համալրուած նաեւ պայծառութիւն, լուսազարդութիւն, յստակութիւն, պարգութիւն, ջիմջութիւն, վնիստութիւն, մաքրութիւն հոմանիշներով (հմմտ. ՀՀՀԲ, 564): Բառն արդի հայերէնի բացատրական բառարաններում «հնց.», «քնստ.» նշումներով է (ԱՀԲԲ, 1264. ԺՀԼԲԲ, հտ. Դ., 255):

Միեւնոյն ձեռագիր բառարաններում՝ Ռահ. ուղի. անցք. շաւիղ նոյնանիշային շարքերում (79բ), յենաբառը պահպանելու փոխառեալ համարուող ուսին է՝ «նամբայ, նամապարհ»՝ պհլ. rāh ձեւից (ՀԱԲ, հտ. Դ., 139): Միջին գրական հայերէնում այն դիտուում է պարսկերէնից փոխառութիւն (ԱՄԳՀՊ, հտ. Ա., 234): Գրաբարի տպագիր բառարաններում ուսին վկայուած է «նամապարհ. ուղի. արահետ. շաւիղ» իմաստներով (ՆՀԲ, հտ. Բ., 680. ԱԲ, 708. ԳԲ, հտ. Բ., 434)⁵⁰: Նոյնն են արձանագրում ՄՀԲԲ, ԱՀԲԲ և ԺՀԼԲԲ (ՄՀԲԲ, հտ. Դ., 163. ԱՀԲԲ, 1258. ԺՀԼԲԲ, հտ. Դ., 249. վերջին երկուսը՝ «հնց.», «քնստ.» նշումներով): Հ. Աճառեանի հաւաստմամբ Փաւստոս Բիւզանդի երկում ուսիվրայ բառի առկայութիւնը հնարաւորութիւն է ընձեռում յանգելու ուսի արմատի՝ «Ոսկեդարում գոյութիւն» ունենալուն (ՀԱԲ. ն.տ.)⁵¹: Ըստ ՀԼԲԲի՝ ուսին ուայ, ու տարբերակներով գործառւում է միայն Ղարաբաղի (Գնձ.) բարբառում (ՀԼԲԲ, հտ. Ե., 225), թէեւ Ղարաբաղի բարբառին նուիրուած աշխատութիւններում այն չի յիշատակուում⁵²: ՆՀԲն կանոնագրքից քաղուած միակ օրինակով՝ «Իւրաքանչիւր ոք ի մեզ յանցս և յոսիս կարգեալ են», ուսի-ը բացատրում է՝ «իմա՝ որպէս ջրանցք. առու. յն. լտ. Καναλιον. Canalis» (ՆՀԲ, անդ.): Նոյնանիշային շարքե-

50 Տե՛ս նաեւ՝ ՂԱԶԱՐԵԱՆ, Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան (այսուհետեւ՝ ԳՀԲ), Անթիլիսա 2000, 598:

51 Լ. Յովհաննիսեանի վկայութեամբ ուսին աւանդուած է Թ. դարից. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Լ., Հայերէնում իրանական փոխառութիւնները, 78:

52 Տե՛ս ՍԱՐԳՍԵԱՆ, Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երեւան 2013: ԴԱԻԹԵԱՆ, Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային բարսէզը, Երեւան 1966:

րում բառին կից անցքը յուշում է, որ ձեռագիր բառարաններն կազմողը կամ ընդօրինակողը քաջածանօթ է եղել նաեւ միջնադարեան հայ եկեղեցական իրաւունքի ժողովածուին:

Այսպէս, նոյնանիշների՝ ԺԸ. դարու աւանդուած ձեռագիր բառարաններում քննուող բառերը մեծաւ մասամբ փոխառուած են իրանական լեզուներից⁵³. դրանք հնչիւնական տարբերակներով եւ տարբեր նշանակութիւններով գործառուած են հայերէնի բարբառներում. մի քանիսն էլ բարբառային ընդհանրական կիրառութիւն ունեն:

ՆԱԶԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

53 Այս առնչութեամբ, քերես, հարկ է յաւելիլ հետեւեալը. հումանիշների «Հանդէս քանաստեղծաց...» խորագրով Զեռագիր քառարաններին անդրադառնալիս Գ. Գասպարեանը նշում է, որ «Բառարանի հմութիւնը, ըստ յայտնի ձեռագրերի հասնում է ԺԲ. դարը, բայց վերաբերում է աւելի վաղ շրջանի» (ԳԱՍՊԱՐԵԱՆ, Գ., *Հայ քառարանագրութեան պատմութիւն*, Երեւան 1968, 34): Նոյնանիշների՝ ԺԸ. դարի աւանդուած Զեռագիր քառարանները նոյնպէս կարող են վերաբերել «աւելի վաղ շրջանի», հետեւաբար հարկ է նկատի առնել Յ. Օրբելու՝ Ժամանակաշրջանին վերաբերող այն դիտարկումը, ըստ որի՝ արհեստների զարգացման թելադրամբով կարելորւում է ոչ միայն արհեստաւորների գրագիտութեան անբաժեշտութիւնը, այլեւ գրական կերպարների իմացութիւնը՝ թէ՛ տեղական, թէ՛ օտար վերնախաւի եւ թէ՛ արտահանման համար մախատեսուած արտադրանքը (հմտ. Սարգիս Պիծակի պատուէրները քարձրաստիճան հոգեւորականութիւնից եւ ազնուականութիւնից. տե՛ս ՂԱԶԱՐԵԱՆ, Վ., *Սարգիս Պիծակ*, 1980, 10) նկարագրողիւ-դրուագադրողիւ, գծանկարիւ դասական քանաստեղծութեան լեզուով, այն է՝ պարսից: Լեզու, որ Յ. Օրբելու հաւաստումով պատուաւոր տեղ էր զբաղեցնում աշխարհիկ վերնախաւում՝ անկախ ազգութիւնից եւ դաւանանքից (ОРЕБЕЛИ, И., *Избранные труды*, т.1, Москва 1968, 260):

Summary

LOANWORDS AND COMPOUNDS WITH FOREIGN WORDS IN 18TH CENTURY MANUSCRIPT DICTIONARIES OF SYNONYMS

NAZIK HOVHANNISSYAN

In manuscript dictionaries some *synonymic* rows end with loanwords. They exist in Armenian dialects. In this article these loanwords are *examined* as interferences of the compilers or the authors of the manuscript dictionaries. In fact, they supplied and added what they knew. These loanwords are mostly borrowed from Iranian language.

This article considers such words գահ “time; place”, լիարանալ “to be thin and skinny”, մանտիլ “headkerchief, headscarf, handkerchief”, ույուշմիշ ըլլալ “to be stupefied, to be befuddled”, պօզայ “boza, drink from millet”, շի-րէ “juice; wine”, շերպէթ “sherbet; syrup; sweet drink”, աքալիս “aqua regia”, գրապան “collar”, ոստ “abundant, plentiful; much, many”, ոռշմութիւն “simple-heartedness, simple-mindedness; ingenuousness”, րահ “road, way”.

///

///